ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հուլիսի 2016 թվականի N 586 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 3-րդ ենթակետի՝

1. Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի 16-րդ նիստին մասնակցելու նպատակով 2016 թվականի հուլիսի 7-9-ը Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) գործուղել Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության կազմում ընդգրկել նաև Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Օլեգ Եսայանին և Սանկտ Պետերբուրգում Հայաստանի Հանրապետության գլխավոր հյուպատոս Հրայր Կարապետյանին:

3. Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության՝ Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ) գործուղման հետ կապված ծախսերը, այդ թվում՝ Երևանի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի պաշտոնական պատվիրակությունների սպա-

սարկման սրահի և Սանկտ Պետերբուրգ օդանավակայանի սպասարկման սրահի ծախսերը՝ համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի, կատարել՝

1) Հովիկ Աբրահամյանինը, Գուրգեն Դումանյանինը, Ստեփան Քարտաշյանինը, Գոհար Պողոսյանինը, Էդուարդ Հարությունյանինը, Սյուզաննա Ավետիսյանինը և Բագրատունի Բարսեղյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների, իսկ ներկայացուցչական, փոխադրամիջոցների վարձակալման և հուշանվերների ձեռքբերման հետ կապված ծախսերը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտաահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

2) Շավարշ Քոչարյանինը և Արմեն Ղևոնդյանինը (այդ թվում՝ Երևան-Սանկտ Պետերբուրգ-Երևան ճանապարհածախսը)՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների, իսկ Լևոն Մինասյանինը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության միջոցների հաշվին.

3) Վաչե Գաբրիելյանինը, Գագիկ Բեգլարյանինը և Համիկ Մկոյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտաահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

4) Գարեգին Մելքոնյանինը, Իոսիֆ Իսայանինը, Գագիկ Եգանյանինը, Լուսինե Դավթյանինը, Գագիկ Գրիգորյանինը, Արման Շահինյանինը և Տիգրան Մեհրաբյանինը, այդ թվում՝ Երևան-Սանկտ Պետերբուրգ-Երևան ճանապարհածախսը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտաահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին.

5) Ստեփան Քարտաշյանին, Էդուարդ Հարությունյանին և Սյուզաննա Ավետիսյանին, այդ թվում՝ Երևան-Սանկտ Պետերբուրգ ճանապարհածախսը՝ Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարին՝ կազմակերպել հատուկ ինքնաթիռի չվերթ՝ 2016 թվականի հուլիսի 7-ին՝ Երևան-Սանկտ Պետերբուրգ, իսկ 2016 թվականի հուլիսի 9-ին՝ Սանկտ Պետերբուրգ-Երևան երթուղով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետին՝ աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմին սույն որոշման 4-րդ կետում նշված չվերթի կազմակերպման հարցում:

6. Հատուկ ինքնաթիռի չվերթի կազմակերպման հետ կապված ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացրած հաշվետվության:

7. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին՝ լուծել Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության՝ Սանկտ Պետերբուրգ մեկնելու հետ կապված հարցերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2016 թ. հուլիսի 1
Երևան

586v.voroshum

Հավելված
ՀՀ վարչապետի 2016 թ.
հուլիսի 1-ի N 586 - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-9-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ (ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ) ՄԵԿՆՈՂ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ

Հ. Աբրահամյան	- ՀՀ վարչապետ
Վ. Գաբրիելյան	- ՀՀ փոխվարչապետ, միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար
Գ. Բեգլարյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Օ. Եսայան	- ՌԴ-ում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան
Գ. Դումանյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարարի առաջին տեղակալ
Գ. Մելքոնյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Շ. Քոչարյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ
Ի. Իսայան	- ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի տեղակալ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Գ. Եգանյան	- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Լ. Դավթյան	- ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի տեղակալ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Գ. Գրիգորյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավար (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)

Ս. Քարտաշյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Ա. Ղևոնդյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական, ՀՀ արտաքին գործերի նախարարության ԱՊՀ վարչության պետ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Գ. Պողոսյան	- ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար
Հ. Կարապետյան	- Սանկտ Պետերբուրգում ՀՀ գլխավոր հյուպատոս
Է. Հարությունյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության արարողակարգի բաժնի պետ (05.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Ս. Ավետիսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Լ. Մինասյան	- ՀՀ արտաքին գործերի նախարարության «Պետական արարողակարգի ծառայություն» գործակալության պաշտոնական այցերի բաժնի առաջին քարտուղար (02.07.2016 թ. - 10.07.2016 թ.)
Կ. Ասոյան	- ՌԴ-ում ՀՀ առևտրական ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Հ. Մկոյան	- «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ)
Ա. Շահինյան	- «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի օպերատոր (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Տ. Մեհրաբյան	- «Տեղեկատվության և վերլուծության կենտրոն» ՊՈԱԿ-ի լուսանկարիչ (06.07.2016 թ. - 09.07.2016 թ.)
Բ. Բարսեղյան	- ՀՀ վարչապետի անվտանգության ծառայության պետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ